

## Մամլոյ Հաղորդագրութիւն

### Յայտարարութիւն՝ Արաբունարի (Գորանի) մէջ Վտանգաւոր Մարդկային Իրավիճակին վերաբերեալ

"Իսլամական Պետութիւն - SUՀԵՇ" կոչուած կազմակերպութիւնը սկսաւ աննախընթաց ուժգնութեամբ կատաղի բարբարոսական յարձակում մը Արաբունար (Գորանի) շրջանին վրայ, որուն արդիւնքն էր ըստ վերջին տեղեկութիւններուն, ահաբեկչական կազմակերպութեան վերհսկողութիւնը 60 գիւղերու այդ շրջանին մէջ: Այս ընդարձակ արշաւանքը առաջնորդեց տեղահանում տասնեակ հազարաւոր Քիւրտ քաղաքայիններ այս գիւղերու բնակիչներնէն, ուր իրաւապաշտպանական զեկույցներ հաղորդեցին թէ շրջանի բնակիչներէն հարիւրաւոր քաղաքայիններու ճակատագիրը դեռ անյայտ է:

Ազգային Համակարգող Մարմինը կը յայտնէ իր խիստ դատապարտութիւնը այս ահաբեկչական կազմակերպութեան արարքներուն, և խորին մտահոգութիւնը բարբարոսական արշաւանքին շարունակութիւնը շրջանին վրայ, ողջունելով Ժողովուրդի Պաշտպանութեան Միաւորները, որ կը դիմադրէ ահաբեկիչները, չնայած մեծ տարբերութեան սպառազինութեան որակի իրենց միջեւ, և ան կը պահանջէ բոլոր Սուրիացիները, որպէսզի կանգնին Միաւորներուն կողքին դիմադրելու ահաբեկչական կազմակերպութիւնը:

Ինչպէս նաեւ, Համակարգող մարմինը կը դատապարտէ ամենախիստ առումով Թրքական դաւադիր դիրքը "Իսլամական Պետութիւն" կազմակերպութեան հետ, որ անկասկածելի դարձաւ, մասնաւորապէս Թուրքիոյ դիրքորոշումէն ետք, որ մերժեց ստորագրել Ժետտայի փաստաթուղթին՝ "Պայքարիլ ահաբեկչութիւնը Իսլամական Պետութիւն կազմակերպութեան", և Համակարգող Մարմինը կը պահանջէ Թուրքիոյ կառավարութիւնը հնազանդիլ Ապահովութեան Խորհուրդի բանաձեւ թիւ 2170-ի պայմաններուն և անմիջական դադրեցում ապահովելու որեւէ ձեւ աջակցութիւն "Իսլամական Պետութեան":

Ազգային Համակարգող Մարմինը կը յայտնէ իր խորին ցաւը միջազգային հասարակութեան ջանքերուն կեդրոնացումը պատերազմելու "Իսլամական Պետութեան" Իրաքի մէջ միայն, նոյնիսկ դաշնակցութեան մէջ, որ ԱՄՆ պիտի կազմէ կամ "Ապահովութիւն և Խաղաղութիւն Իրաքի մէջ" խորհրդաժողովին, որ

գումարուեցաւ Ֆրանսայի մայրաքաղաք՝ Փարիզի մէջ: Համակարգող Մարմինը կը հաստատէ թէ՛ միջազգային բոլոր ջանքերը պատերազմելու "Իսլամական Պետութիւն" կազմակերպութեան Իրաքի մէջ միայն, պիտի չի հասնի իր նպատակներուն եթէ պատերազմ տեղի չունեցաւ ահաբեկչական կազմակերպութեան դէմ Սուրիոյ մէջ: Ինչպէս նաև Համակարգող Մարմինը կը յիշեցնէ միջազգային հասարակութիւնը թէ Ապահովութեան Խորհուրդի բանաձեւ թիւ 2170-ը կը բովանդակէ պատերազմիլ Իսլամական Պետութեան դէմ Իրաքի և Սուրիոյ մէջ, և ոչ թէ միայն Իրաքի մէջ, ուստի Համակարգող Մարմինը կը պահանջէ միջազգային հասարակութիւնը տրամադրելու բոլոր տեսակի աջակցութիւն ժողովուրդի Պաշտպանութեան Միաւորներուն և իր կողքին բոլոր խմբակցութիւններուն, որոնք կը պատերազմին ահաբեկչական կազմակերպութեան դէմ:

Դամասկոս 20/09/2014

Ազգային Համակարգող Մարմին – Տեղեկատուութեան գրասենեակ